«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 3258 «02» 03 2021թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՌԿԱ ՁԵՎՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 25.02.2021թ. №34/80 հրամանը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կանոնադրության 28-րդ կետի 2-րդ ենթակետով՝

Հրամայում եմ.

1.1. 2021թ. մարտի 23-ից ԵՊՀ ԻՄ-ի բոլոր կրթական ծրագրերով ուսումնական գործընթացն իրականացնել առկա ձևով՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները:

1.2. 2021թ. մարտի 09-ից ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացն իրականացնել առկա և առցանց եղանակով:

2. ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ 2021թ. մարտի 09-ից ապահովել իրենց ստորաբաժանումների բնականոն աշխատանքը՝ պահպանելով ԵՊՀ ԻՄ-ի ներքին կարգապահական կանոններով սահմանված աշխատաժամանակի ռեժիմը:

3.Ուսումնական գործընթացի կազմակերպմամբ պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության (covid-19) համավարակի տարածման կանխարգելման նպատակով կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում կիրառվող հակահամաճարակային կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ստորաբաժամումների ղեկավարներին:

4.Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին և ուսանողներին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ